ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
РУКОВОДИТЕЛЬ
СЕЛЬСКОЙ ОБЩИНИ
СЕЛО АЦИК

«12» դեկտեմբերի 2012թ.

N 111

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ*

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ2 նիստի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 10-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ համայնքի ավագանու նշված որոշումը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համայնքի ղեկավարի համապատասխան գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 57 թերթ:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Արթուր Եղիազարյան*

Մուտք թիվ 11182-12
«12» 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
СТАРОСТИНА
СЕЛЬСКОЙ ОБЩИНИ
СЕЛО АЦИК

# ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2012 թ.

N 10-Ն
N 2 նիստի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի« ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,«Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Բյուջեի ծախսային մասում
1/ 01 բաժին 6 խումբ 1 դասի 4261 հոդվածը պակասեցնել 45,0 հազար դրամով՝ սահմանելով 155,0 հազար դրամ,
2/01 բաժին 6 խումբ 1 դասում ավելացնել 4235 հոդվածը՝ 20,0 հազար դրամով և 4819 հոդվածը՝ 25,0 հազար դրամով:
3/ 06 բաժին 3խումբ 1 դասի 4269 հոդվածը պակասեցնել 580,0 հազար դրամով, որից 280,0 հազար դրամը տեղափոխել 4212 հոդվածին, իսկ 300,0 հազար դրամը՝ 10 բաժին 7 խումբ 1 դասի 4729 հոդվածին:
4/ 06 բաժին 4 խումբ 1 դասի 4269 հոդվածի 1200,0 հազար դրամը տեղափոխել 10 բաժին 7 խումբ 1 դասի 4729 հոդված:
5/06 բաժին 3խումբ 1 դասի նախորդ տարիների պարտքի նախահաշվի 4212 հոդվածի 170,0 հազար դրամը տեղափոխել ընթացիկ տարվա նախահաշվի 4212 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | |
|---|---|
| 1. Ալանյան | Սամվել |
| 2. Արշակյան | Համլետ |
| 3. Եղիազարյան | Մուրազ |
| 4. Կարապետյան | Սերգո |
| 5. Մարտիրոսյան | Բարեղամ |
| 6. Նաքոյան | Սուրեն |
| 7. Սարգսյան | Վարդան |

Համայնքի ղեկավար Ա. Եղիազարյան

2012 թվականի դեկտեմբերի 05
գյուղ Հացիկ